ՄԵՐ ԹԵՐԹԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Այս տարի նշվելու է ՀՀ ԳԱԱ կազմավորման 80-ամյա հոբելյանը: Դա լավ առիթ է մեկ անգամ ևս արժևորելու հայոց գիտության կաճառի հարուստ պատմությունը, հանրայնացնելու գիտության տարբեր բնագավառներում նրա վիթխարի ձեռքբերումները և համաշխարհային գիտության մեջ հայ գիտնականների ծանրակշիռ ներդրումը: Դա առիթ է նաև վեր հանելու գիտության զարգացումը խոչընդոտող խնդիրները և ճշգրտելու զարգացման հեռանկարները:

Մեր երկրի առջև ծառացած են բազում մարտահրավերներ, սոցիալ-տնտեսական կյանքում առկա են չլուծված բազմաթիվ խնդիրներ, մենք հայտնվել ենք ներքին և արտաքին անվտանգային լուրջ հանգուցալուծումների շեմին: Տակավին առկախ է արցախյան հիմնահարցը, անորոշ են «ակադեմիական քաղաքի» սին գաղափարը և ընդհանրապես գիտության վաղվա օրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Գիտություն» թերթի խմբագրությունը նպատակահարմար է գտնում ունենալ նոր խորագրով բաժին՝ «Մտքերի հարթակ»: ԳԱԱ համակարգի աշխատակիցները (և ոչ միայն) կարող են այս հարթակն օգտագործել իրենց առաջարկները, մտահոգությունները, խոհերն ու կարծիքները բարձրաձայնելու համար:

Ակնկալում ենք մեր գործընկերների թե՛ մասնագիտական և թե՛ քաղաքացիական առավել ակտիվ դիրքորոշումը. դժվարին այս ժամանակներում մեր գաղափարներով փորձենք օգտակար լինել կարևորագույն հարցերի լուծման՝ ազգային շահերից բխող իրատեսական ուղիների որոնման գործում:

«Գիտություն» թերթի խմբագրություն